ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N6

ՍՀՀ-ԳՀԱՊՁԲ-19/23 ծածկագրով գնանշման հարցում ընթացակարգի գնահատող հանձնաժողովի գնահատման նիստի

Ք. Սևան

17.07.2019թ.
Ժամը 10:30

Հանձնաժողովի նախագահ՝ Մարի Սիմոնյան

Անդամներ՝ Դոնարա Լալազարյան
Մարիաննա Առաքելյան
Անուշ Մարտիրոսյան

Գնումները համակարգող՝ Լանա Դավթյան

ՍՀՀ-ԳՀԱՊՁԲ-19/23 ծածկագրով հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին

(Մ. Սիմոնյան)

1. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի վերաբերյալ տրամադրած տեղեկատվությունը գնահատելու մասին:
2.1-ին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրի համապատասխանությունը սույն հրավերի պահանջներին գնահատելու մասին:
3. Տեղեկություններ՝ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին:
4. Ընտրված մասնակից հայտարարելու մասին:
5. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

1. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի վերաբերյալ տրամադրած տեղեկատվությունը գնահատելու մասին.

(Մ. Սիմոնյան)

1.1 Հանձնաժողովը ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ-ի N526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման կարգի>> 43-րդ կետի 3-րդ ենթակետով 10.07.2019թ-ին էլեկտրոնային փոստի միջոցով ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում է ուղարկել 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցներ՝ **<<ԼԵԲՐՈՆ>> ՍՊԸ-ի, <<ՖՈՏՈՆ>> ՍՊԸ-ի, <<Մեղրու պահածոների գործարան>> ՓԲԸ-ի, <<Ցիկլոիդ>> ՍՊԸ-ի, Ա/Ձ Վիկտորյա Սամվելյանի, <<Եվա և Սյուզի>> ՍՊԸ-ի, <<ԴԱՆՆԻԿ>> ՍՊԸ-ի, <<ՍՅ.ՌՈՒ.ՄԱ>> ՍՊԸ-ի, <<Սավա>> ՍՊԸ-ի, «Ատաստ ֆուդ» ՍՊԸ-ի, <<Վաղատնի>> ՍՊԸ-ի, <<Սևանի հացի գործարան>> ՓԲԸ-ի, <<Հադրութ-1>> ՍՊԸ-ի և <<Ֆլորան>> ՍՊԸ-ի՝** հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ: ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեն ՀՀ կառավարության

04.05.2017թ-ի N526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման կարգի>> 44-րդ կետով սահմանված ժամկետում՝ հարցումը ստանալու օրվանից 3 աշխատանքային օրվա ընթացքում տրամադրել է հարցման մասին տեղեկատվությունները, համաձայն որի՝ **<<ԼԵԲՐՈՆ>> ՍՊԸ-ն, <<Ցիկլոիդ>> ՍՊԸ-ն, Ա/Ձ Վիկտորյա Սամվելյան, <<Եվա և Սյուզի>> ՍՊԸ-ն, <<ԴԱՆՆԻԿ>> ՍՊԸ-ն, <<ՍՅ.ՌՈՒ.ՄԱ>> ՍՊԸ-ն, <<Սավա>> ՍՊԸ-ն, <<Վաղատնի>> ՍՊԸ-ն, <<Սևանի հացի գործարան>> ՓԲԸ-ն և <<Ֆլորան>> ՍՊԸ-ն** հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորություններ չունեն:

«Ատաստ ֆուդ» ՍՊԸ-ն վերը նշված եզրակացության համաձայն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունի **3000 ՀՀ դրամ** ժամկետանց պարտավորություն, որը չի գերազանցում է <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված շեմը:

<<Հադրութ-1>> ՍՊԸ-ն վերը նշված եզրակացության համաձայն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունի **11680 ՀՀ դրամ** ժամկետանց պարտավորություն, որը չի գերազանցում է <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված շեմը:

<<Մեղրու պահածոների գործարան>> ՓԲԸ-ն վերը նշված եզրակացության համաձայն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունի **21000 ՀՀ դրամ** ժամկետանց պարտավորություն, որը գերազանցում է <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված շեմը:

Ելնելով վերգրյալից և ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017 թ-ի N526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման կարգի>> 48-րդ կետի 1-ին ենթակետի Ա պարբերությամբ որոշեց ծանուցում ուղարկել **<<Մեղրու պահածոների գործարան>> ՓԲԸ-ն** առաջարկելով հանձնաժողովին ներկայացնի կոմիտեի տրամադրած տեղեկատվության մեջ նշված 21000 ՀՀ դրամի վճարումը հիմնավորող փաստաթղթի բնօրինակից արտատպված (սկանավորված) օրինակը:
Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

<u>2. 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրի համապատասխանությունը սույն հրավերի պահանջներին գնահատելու մասին.</u>

(Մ. Սիմոնյան)

2.1 ՍՀՀ-ԳՀԱՊՁԲ-19/23 ծածկագրով գնանշման հարցում ընթացակարգին **<<ԼԵԲՐՈՆ>> ՍՊԸ-ն, <<ՖՈՏՈՆ>> ՍՊԸ-ն, <<Ցիկլոիդ>> ՍՊԸ-ն, Ա/Ձ Վիկտորյա Սամվելյանի, <<Եվա և Սյուզի>> ՍՊԸ-ն, <<ԴԱՆՆԻԿ>> ՍՊԸ-ն, <<ՍՅ.ՌՈՒ.ՄԱ>> ՍՊԸ-ն, <<Սավա>> ՍՊԸ-ն, «Ատաստ ֆուդ» ՍՊԸ-ն, <<Վաղատնի>> ՍՊԸ-ն, <<Սևանի հացի գործարան>> ՓԲԸ-ն, <<Հադրութ-1>> ՍՊԸ-ն և <<Ֆլորան>> ՍՊԸ-ն** հայտով նախատեսված ապրանքների ամբողջական նկարագիրը ներկայացրել են հրավերով սահմանված ժամկետում և կարգով:

<<ԼԵԲՐՈՆ>> ՍՊԸ-ի, <<ՖՈՏՈՆ>> ՍՊԸ-ի, <<Ցիկլոիդ>> ՍՊԸ-ի, Ա/Ձ Վիկտորյա Սամվելյանի, <<Եվա և Սյուզի>> ՍՊԸ-ի, <<ԴԱՆՆԻԿ>> ՍՊԸ-ի, <<Սավա>> ՍՊԸ-ի, «Ատաստ ֆուդ» ՍՊԸ-ի և <<Սևանի հացի գործարան>> ՓԲԸ-ի կողմից ներկայացված առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագիրը /Հավելված 3.1/ համապատասխանում են սույն հրավերի պահանջներին:

<<Վաղատնի>> ՍՊԸ-ի, <<Հադրութ 1>> ՍՊԸ-ի և **<<Ֆլորան>> ՍՊԸ**-ի կողմից ներկայացված առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագիրը /Հավելված 3.1/ չի համապատասխանում են սույն

հրավերի պահանջներին, մասնավորապես առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրի /Հավելված 3.1/ տեխնիկական բնութագիր սյունակն լրացվել է թերի:

<<**ՍՅ.ՌՈՒ.ՄԱ**>> **ՍՊԸ-ի** ի կողմից ներկայացված առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագիրը /Հավելված 3.1/ չի համապատասխանում են սույն հրավերի պահանջներին, մասնավորապես առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրի /Հավելված 3.1/ 56-րդ չափաբաժնի տեխնիկական բնութագրի:

<<**Մեղրու պահածոների գործարան**>> **ՓԲԸ-ն** հայտով նախատեսված ապրանքների ամբողջական նկարագիրը չի ներկայացրել հրավերով սահմանված ժամկետում և կարգով:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ-ի N526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման կարգի>> 47-րդ կետով հանձնաժողովը որոշեց երեք աշխատանքային օրով կասեցնել գնահատող հանձնաժողովի նիստը, որի մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնել <<**Մեղրու պահածոների գործարան**>> **ՓԲԸ**-ին, <<**ՍՅ.ՌՈՒ.ՄԱ**>> **ՍՊԸ-ին, <<Վաղատնի>> ՍՊԸ-ին, <<Հադրութ-1>> ՍՊԸ-ին և <<Ֆլորան>> ՍՊԸ-ին՝** առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը՝ 24.07.2019թ-ի ժամը 09:00 շտկել անհամապատասխանությունները:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

3. Տեղեկություններ՝ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.

(Մ. Սիմոնյան)

3.1 Հայտերի վերաբերյալ հարցումներ չեն կատարվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

5. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

(Մ. Սիմոնյան)

5.1 ՀՀ ԱՆ <<Սևանի հոգեբուժական հիվանդանոց>> ՓԲԸ-ի ՍՀՀ-ԳՀԱՊՁԲ-19/23 ծածկագրով ընթացակարգի հաջորդ նիստը հրավիրել 24.07.2019թ.-ին 09:00, ք. Սևան Կարմիր Բանակի 68 հասցեում, ֆինանսական բաժնի վարչական շենքում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

Հանձնաժողովի նախագահ՝ Մ. Սիմոնյան

Անդամներ՝ Դ. Լալազարյան

Մ. Առաքելյան

Ա. Մարտիրոսյան

Գնումների համակարգող՝ Լ. Դավթյան